ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ. (226) 43434,
Էլ. փոստ charentsavan.kotayq@mta.gov.am

N 859-18
09 հուլիս 2018թ.

«ԳԱԼՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ԲԱԲԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բաբայան,

Չարենցավանի համայնքապետարանի և <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի միջև 23.05.2018թ. կնքված Չարենցավան համայնքի կարիքների համար լուսադիոդային լուսատուների մատակարարման թիվ <<ՉՔ-ԳՀԱՊՁԲ-18/9>> պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր մինչև 2018 թվականի հուլիսի 07-ը մատակարարել թվով 200 հատ լուսադիոդային լուսատու՝ 8994000 (ութ միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն Ձեր ընկերության կողմից վերը նշված ապրանքները չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետըև 2.1.7.1 կետիա) ենթակետը՝ Չարենցավանի համայնքապետարանը 2018 թվականի հուլիսի 09-ից՝ միակողմանի լրիվ լուծում է վերը նշված պայմանագիրը՝ թվով 200 հատ լուսադիոդային լուսատույի մասով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 8994000 (ութ միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Չարենցավանի համայնքապետարանի 900135101203 հաշվեհամարին փոխանցել 31479 (երեսունմեկ հազար չորս հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես տույժ (պայմանագրի 6.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց (տուժանք) 899400 (ութ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով՝ 900135101203 հաշվեհամարին:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ.ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Կատ. բաժնի պետ՝ Պ. Գաբրեյան